

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

07.10.2025 14:48



2025 թվականի հոկտեմբերի 7-ին «Փաստաբանությունը Հայաստանի Հանրապետությունում» դասընթացի շրջանակներում ՀՀ Գիտությունների ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ամբիոնի մագիստրատուրայի ուսանողները ճանաչողական այցով հյուրընկալվել են ՀՀ փաստաբանների պալատում:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը ապագա իրավաբաններին ներկայացրել է Պալատի կառուցվածքը, փաստաբանական գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև պատասխանել է ուսանողների մի շարք հարցերի, որոնք վերաբերվում էին փաստաբանի վարքագծին, հանրային պաշտպանների աշխատանքին ու արդար դատաքննության իրականացմանը:

Այնուհետև հյուրընկալված ուսանողներին հնարավորություն է ընձեռնվել շրջելու Փաստաբանների պալատի վարչական շենքում, ծանոթանալու Փաստաբանների պալատում, Փաստաբանական Ակադեմիայում և Հանրային պաշտպանի գրասենյակում տարվող աշխատանքներին:

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })